ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն **20.11.2015**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Ծրագրի անվանումը:

Վարկի համարը: P148836

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ TPD-10

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (ՎԶՄԲ) վարկ ստանալու նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Շենքերի նախագծային և հեղինակային հսկողության աշխատանքների կազմակերպման համար:

Առաջադրանքի նպատակը. ՀՏԶՀ վարկային ծրագրի ֆինանսավորման շրջանակներում Հայաստանի տարբեր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում նախատեսվում է իրականացնել մի շարք սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրեր: Այդ թվում դպրոցների, մանկապարտեզների, համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների, բուժհիմնարկների, թանգարանների, բարեկարգվող տարածքների կառուցման, վերակառուցման և վերոնորոգման ծրագրեր : Սույն հրավերի շրջանակներում խորհրդատուն պետք է իրականացնի՝ **Քաղսի գյուղի բուժամբուլատորիայի կառուցման** և **Ալավերդի քաղաքի ըմբշամարտի դպրոցի վերակառուցման** համար անհրաժեշտ նախագծային աշխատանքներ և հեղինակային հսկողություն:

Խորհրդատուն պետք է՝

ա) մշակի վերը նշված սոցիալական ոլորտի կառույցների մանրամասն աշխատանքային նախագծեր

բ) համաձայնեցնի իր կողմից մշակված նախագծերը համապատասխան կազմակերպությունների հետ

գ) իրականացնի հեղինակային հսկողություն իր կողմից նախագծված կառույցների շինարարության ընթացքում

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Խորհրդատուի ընտրության չափանիշներն են.

- Ընդհանուր փորձառություն / կազմակերպության ստեղծման տարեթիվը, գործունեության հիմնական ոլորտների համառոտ նկարագրություն և կատարված աշխատանքների ցանկ /
- Նմանատիպ կառույցների՝ դպրոցների, մանկապարտեզների, համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների, բուժհիմնարկների, թանգարանների, բարեկարգվող տարածքների կառուցման, վերակառուցման, վերանորոգման նախագծերի մշակման փորձ:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում", հունվար 2011 փոփոխված հուլիս 2014, Խորհրդատուների Ուղեցույցներ, (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised in July 2014)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January 2011, revised in July 2014) 3.7 կետում սահմանված 'Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն' ընթացակարգին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՏԶՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Գնումների վարչություն, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2015 թ. դեկտեմբերի 2-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Գնումների Վարչություն

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ procurement@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42